

ձեռագիրների, լատիներեն և հայերեն թարգմանութեանց համեմատութեամբ: Աերջին տպագրելու համար նա ձեռքի տակ ունեցել է 4 ձեռագիրներ (2-ը ս. Եղմիածնի և 2-ը Վենետիկի) և կարողացել է նոցանով պարզաբանել բնագրի մի շարք թերի կամ մութ մնացած տեղեր:

Կ. Ա.



ՊՐՈՓ. ՖԵՏՏԵՐԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առ Կորնթացիս Երրորդ տարականն թղթի մասին:

Անուանի հայազէս Պրոֆ. Ֆետտերը ուղարկել է մեզ իւր վերջերս լոյս տեսած մի նոր բրոշուրը՝ «Առ Կորնթացիս Գ. տարականն թղթի մի բարբառական աղբիւր» * վերնագրով, որ ներկայացնում է մի լրացուցիչ հետազոտութիւն նոյն խնդիրների նկատմամբ, որոնք նիւթ են եղել նորա անցեալ տարուայ՝ «Առ Կորնթացիս Գ. տարականն թուղթը» ** զեղեցիկ և մանրագին հրատարակութեան: Այդ անվաւերական թղթի հայերէն թարգմանութիւնը վաղուց արդէն յայտնի է գիտնական աշխարհին, անցեալ դարում Չ անգամ տրպագրուել է Եւրոպացիների ձեռքով և ապա լոյս է տեսել իբրև յաւելուած Հ. Չոհրաբեանի և Հ. Արսէն Բագրատունու Աստուածաշունչի հրատարակութեանց, Բացի դորանից 1823-ին թարգմանուել է գերմաներէն և գիտնական ծանօթութիւններով լուսարանուել աստուածարան Բինլի աշխատութեամբ, 1890 թ. ից յետոյ գտնուել են նաև այդ թղթի երկու իրարից անկախ լատիներէն թարգմանութիւնները, Այնուհետև Հայերէն թարգմանութեամբ պահուել է Եփրեմ Ասորու՝ ի շարս Պօղոս Առաքեալի կանոնական թղթերի, նաև այս թղթի մեկնութիւնը, որ պ. Ստ. Կանայեանց թարգմանել է Գերմաներէն և Պրոֆ. Յասն հրատարակել է իւր «Նոր կտակարանի կանոնի պատմութիւն» *** նշանաւոր գրուածքի մէջ, Աերջուպէս Եփրեմ Ասորու հետևողութեամբ մի մեկնութիւն ևս Յովհան Կախիկ Արտանցին է գրել, — Պրոֆ. Ֆետտեր այս ամէնը ի մի ամփոփելով և հայերէն օրինակները կրկին անգամ Գերմաներէն թարգմանելով, քննադատական ծանօթութիւններով և գիտնական բացատրութիւններով ճոխացրած՝ ընծայել էր այնպիսի

մի ինամբով հրատարակութիւն, որպիսին շատ սակաւ հայերէն յիշատակարանների է վիճակուել:

Նա աշխատում է ցոյց տալ, որ Պօղոս առաքեալին ընծայուած այդ անվաւեր գրագրութիւնը Կորնթացուց հետ՝ բոլոր մինչև այժմ յայտնի օրինակներին նայելով, թարգմանուած է ասորերէնից, Ապա նա Յասնի հետ համաձայն ընդունում է, որ այդ գրագրութեան մեծ մասն առնուած է «Գործք Պօղոսի», նոյնպէս անվաւեր, բայց մի քանի եկեղեցական հայերից գովութեամբ յիշուած յիշատակարանից, Կեղծ հեղինակը իւր այդ յունարէն աղբիւրից առել է Կորնթացուց թուղթն առ Պօղոս, միջանկեալ պատմական մասը և Պօղոսի թղթի 1-22 * տները, մնացածը միայն իւր կողմից աւելացնելով, — Պրոֆ. Ֆետտեր սկզբում կարծում էր, թէ գոնէ այս վերջին մասը հեղինակն իւր կողմից է շարագրել, բայց վերոյիշեալ բրոշուրով ցոյց է տալիս, որ նա այստեղ էլ մի ուրիշ աղբիւր ի նկատի է ունեցել, մի ֆրանսիացի գրող է 25—33 տները, իսկ 34—40 *** կցկցել է նոր Ատակարանի զանազան ասացուածքներից, Եւ որովհետև այսպիսի մի հրէական աղբիւրից օգտուելու և ասորերէնի վերածելու համար հեղինակը կամ ազգաւ հրէայ պէտք է լինէր, կամ հրէաների մէջ մեծացած մէկը՝ Ֆետտեր ենթադրում է, որ Առ Կորնթացիս Գ. թուղթը յառաջ է եկել Եգիպտոյ հրէայ — քրիստոնեաների շրջանում:

Արդէն առաջ նա ի նկատի առնելով մանաւանդ այն հանգամանքը, որ կեղծ հեղինակի կողմից աւելացրած մասերը յարութիւն ուրացողների դէմ են ուղղուած, և յենուելով Եփրեմ Ասորու վկայութեան վերայ՝ բաւականաչափ հաստատուն էր ընդունում այն կարծիքը, թէ Առ Կորնթացիս Գ. թուղթը մի վիճական գրուածք է ընդդէմ Բարդաճան աղանդաւորի կամ նորա հետևողների, Սակայն ըստ իս այդ կարծիքը բաւականաչափ հաստատուն չէ և Եփրեմի վկայութեան զուգակիտ կարող է համարուել Եգիպտոսի վկայութիւնը, **** որով «Մարկիոն» Մանի և այլք նոյնպիսիք՝ հակառակ էին «մարմնոց յարութեան» գաղափարին, Իսկ այդ բոլոր ազանդաւորները Բարդաճանից ոչ պակաս ազդեցութիւն են ունեցել Ասորիւրում, մանաւանդ Մարկիոնեանց, որոնց ուսումը մի ասորու համար Գ. դարում շատ աւելի կասկածելի և վտանգաւոր էր գուցէ, քան Բարդաճանի վարդապետութիւնը:

Ո՛չ պակաս տարակուսական են ինձ համար

* Eine rabbinische quelle des apokryphen dritten Korintherbriefes - երկու արտասուրծին Tübinger Quartalettschrift ամսագրից:
** Der apokryphe dritte Korintherbrief (Tübinger Universitätsprogramm 1894). Wien.
*** Geschichte des neutestamentlichen Kanons. II. 1891 p. 595—606.

* Չոհրաբեանի հրատարակութեան մէջ 1—52.
** Հրէից բարբոսներին մեկնութիւն, ս. գրքի որ եւ է հատուածի մասին:
*** Չոհրաբ. 56—50 եւ 51—60
**** Եղծ աղանդոց. Վենետիկ. 1826. եր. 290 շ.:

մեծարդ ուսուցչապետի կարծիքները հայերէն թարգմանութեան նկատմամբ և թեպէտ նա բարի էր գտնուել իւր ժամանակին մասնաւոր նամակով նոր բացատրութիւններ տալ այդ տարակոյտը փարատելու համար, բայց նոքա ինձ չհամոզեցին: Ար Եփրեմ՝ Ասորու Առ Վորնթացիս Գ. թուղթը միւս կանոնական թղթերի շարքում մեկնելը նշան է, թէ ասորական եկեղեցին այդ թուղթը վաւերական է համարել՝ դա մի բնական հետևութիւն է, Բայց որ նա շատ չանցած այստեղ բողոքովին անյայտութեան է մատնուել և պեշիթայի* մէջ ամենեկին ընդունելութիւն չէ գտել՝ միթէ այդ փաստը թոյլ է տալիս այնպէս հեշտութեամբ ընդունելու, ինչպէս Ֆետտէր է անում, թէ միաժամանակ նոյն թուղթը հեղինակութիւն է ձեռք բերել Հայոց եկեղեցում և ս. Մեսրոպի թարգմանած ս. Գրքի մէջ մտնել, Ընդունելով իսկ, թէ ս. Մեսրոպ ասորերէնից թարգմանել է ամբողջ ս. Գիրքը ծայրէ ի ծայր, որ ոչնչով ապացուցուած չէ՝ պէտք էր կարծել նախ, որ նա այդ թարգմանութիւնն արել է պաշտօնապէս ընդունուած օրինակից, այսինքն անվաւերական թուղթը չպարունակող պեշիթայից և ապա՝ որ նորա թարգմանութիւնը ս. Սահակի ձեռքով յունարէն օրինակի համաձայն գրվիս է ի գլուխ սրբագրուելուց և բողոքովին կերպարանափոխ լինելուց յետոյ՝ պէտք է միջից հանուէր նաև այդ թուղթը, եթէ լինէր, և իրրև տարականոն մի գործ ընդօրինակելու և պահելու անարժան համարուէր: Մեր ձեռքն հասած ս. Գիրքը վկայում է, թէ ինչպիսի հարազատ օրինակներից են օգտուել նորա թարգմանիչները և ինչպիսի նուրբ ճաշակ են ունեցել ուղղին ու սխալը՝ վաւերականն ու անվաւերը իրարից տարբերելու: Եւ մինչդեռ միւս տարականոն ու կրկնօրդականոն գրուածքները մեծ մասամբ աւելի ուշ ժամանակ թարգմանուած են երևում, անվաւեր կտորները յետոյ ներմուծուած՝ ենթադրել թէ «Առ Վորնթացիս Գ. թուղթը 432 թ.-ից առաջ հայերէն է թարգմանուել» և ուրեմն «Աստուածաշունչի ամենահին հայկական թարգմանութեան մեղ հասած միակ մնացորդն է»՝ տարօրինակ է ինձ համար, Այն առարկութիւնը, թէ այս թուղթը Ե. դարից յետոյ թարգմանուած լինել չի կարող, որովհետև այդ ժամանակից ի վեր Ասորոց մէջ նա այլևս կանոնական գրուածքների շարքում չէր, անգոր է ըստ իս. որովհետև մեղ յայտնի չէ ամենեկին, թէ թարգմանողը Աստուածաշունչի միջից է թարգմանել այն և ոչ որ և է կողմ-

նակի աղբիւրից, իսկ այդ ձևով պահուած կարող էր լինել այն դեռ շատ երկար ժամանակ. դուցէ պահուել է մինչև այժմ իսկ որ և է անյայտ ձեռագրի մէջ, Իսկ թէ Թ. դարից առաջ նա երբ և իցէ Հայոց մէջ կանոնական նշանակութիւն ունեցել է՝ Ֆետտէրի բերած փաստերը բաւական չեն այդ հաստատելու համար, նա հիմնուում է զխաւորապէս «Երանելոյն Թէոդորոսի* ընդդէմ Մայրագոմացոյն» ճառի մէջ յիշուած այն վկայութեան վերայ, որով Լուսաւորիչ Առ Վորնթացիս Գ. անվաւեր թղթի մի նախադասութիւնը իրրև Պողոս Առաքեալի խօսք գործածած պէտք է լինէր,** Արդարև այդ նախադասութիւնը մենք գտնում ենք Լուսաւորչի վարդապետութեան մէջ,** բայց արդեօք ի՞նչ ժամանակի գործ է այդ վարդապետութիւնը, արդեօք սկզբնական է նորա մէջ այս մասը, թէ ներմուծեալ՝ զոքա դեռ չլուծուած խնդիրներ են, Թէոդորոսի վկայութիւնը այն ժամանակ արդարև առանձին նշանակութիւն կունենար, երբ այդ անձը նոյն լինէր Օձնեցու ուսուցիչ Բեթենաւորի հետ. բայց ինքը Ֆետտէր գրեթէ հաւանութիւն է տալիս իմ Պօղիկեանց վերաբերեալ գրքի մէջ արած դիտողութեան (որ և ստուգել եմ Վենետիկ եղած ժամանակ ձեռագրի վերայ), որ Թէոդորոս իւր մասին ասում է, թէ ինքն ինն հարիւր տարի**** (Ձ. և ոչ թէ 2) ինչպէս ուղղում է կամայականօրէն հրատարակիչ հայր Աւգերեանը)՝ Քրիստոսի շարչարանքից յետոյ է ապրում, և ուրեմն Թ. դարում: այսինքն այնպիսի մի ժամանակ, երբ յառաջ էին եկել նոր աղանդներ, ազգակից այն աղանդին, որի դէմ մաքառում էր Առ Վորնթացիս Գ. թուղթը, Ահա այդ ժամանակ և կարող էին գտնուել մարդիկ, որոնք այս թուղթը հրապարակ հանէին և Լուսաւորչի հեղինակութեամբ նորա վաւերականութիւնը հաստատել ջանալին, որպէս զի նա իրրև գործիք ծառայէր իրենց ձեռքին հակառակորդների առաջ, Անհաւանական չէ ուրեմն ենթադրել, թէ նա այդ ժամանակուանից էլ մուտք է գործել մեր գրականութեան մէջ և յաջորդ դարերում, երբ պատմական քննադատութեան համար ամենեկին ճաշակ չէր և Մխիթար Այրիվանեցու պէս պարզամիտները պատրաստ էին ընդունել ամէն մի յիշատակարան այնպէս, ինչպէս նոցա վերնագիրն էր ասում՝ կամաց կամաց ս. Գրքի կանոնական գրուածքների շարքն է անցել, Բաւա-

* Այսպէս է կոչուում ս. Գրքի ասորական թարգմանութիւնը:

* Վենետիկացոց ձեռագրի մէջ, ինչպէս անձամբ ստուգել եմ Թէոդորոսի է գրած:
 ** Յովհաննուս Իմաստասիրի մատենագրութիւնք. Վենետիկ. 1855. նր. 135:
 *** Ազաթանգեղոս. Վենետիկ, 1855. նր. 215:
 **** Նր. 157:

կան է միայն մի անհարկ ձգել այն տարականոն գրու-
ուածքների ցանկի վերայ, որ Այրիվանեցին իւր ժամա-
նակագրութեան մէջ * տայիս է, նոցանից մի քանիսը
կանոնական գրուածքների շարքում դնելով՝ որպէս զի
տեսնենք, թէ ապոկրիֆ գրականութիւնը ինչքան
ընդարձակ ծաւալ պէտք է ընդունած լինի նորա
ժամանակ մեր մէջ և թէ նորա ժամանակակիցները
ինչքան անտարբեր էին կանոնական անկանոնից ո-
րոշելու համար, Այն հանգամանքը որ Այրիվանեցին
Առ Արնթացիս Գ. թուղթը միւս երկուսի շար-
քում է դնում, չի կարող ուրեմն իրրե փաստ ծա-
ռայել նորա կանոնական հնութեան:

Արարտի ներկայ համարում իրրե յաւել-
ուած հրատարակում ենք այդ թուղթը, առնելով
Մխիթար Այրիվանեցու ընդօրինակած նշանաւոր
ճառընտրից, ուր նա արգարե Բ. Արնթացուց թըղ-
թից յետոյ է գալիս. էջ 55 չըջ, Գորա հետ մէկ
տեղ բանասէրների ուշագրութեանն ենք յանձնում
ժամանակագրութեան վերոյիշեալ ցանկին մասամբ
համապատասխան մի ցանկ, որ գտնուում է նոյն
ճառընտրում, էջ 369 չըջ, Այդպիսով պատասխանած
կլինինք նաև Հ. Գալէմբարեանի (Հանդէս Ամսօր-
եայ 1891, Յունիս. էջ 165 ծան.) առաջարկած
հարցին, Այրիվանեցու ճառընտրի մէջ Սիրաքից յե-
տոյ այդ ցանկը կայ միայն և ո՛չ ամբողջ գրուածք-
ների:

Կ. Վ.



ՀԱՒԱՍՏԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆԱԿԱՆ և
ՀՈԳԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԷՋ.

Արք մտածում եմ այն փորձառութիւններին
մասին, որ հաւաքել եմ իմ քսանեկնամայ բժշ-
կական գործունէութեան միջոցին, տեսնում եմ որ
շատ քիչ հիւանդներ եմ ունեցել, որոնք իրենց
Քիանուներին և ոսկորների չափազանց լարումից
հիւանդացած լինին, բայց ընդհակառակն շատ բազ-
մաթիւ են այնպիսիները, որոնք հոգեկան երկարա-
տե աշխատանքի պատճառով են հիւանդացել, և
կրրեմն շատ դժուար է կելլ նրանց կատարելապէս
բժշկելը:

Իմ երկարամեայ փորձառութիւնից այն տպա-
ւորութիւնն եմ ստացել, թէ մարդկային մարմնի
կազմակերպութիւնը ոչ թէ գրասեղանի այլ մար-
մնական աշխատանքի համար է, Աւելի առողջ և
զուարթ են այն անձնաւորութիւնները, որոնք դաշ-
տեր ու պարտեզներ են մշակում, որոնք ցանում
ու հնձում են և օրուայ մեծ մասը թարմ օդի մէջ

են շարժուում Այդպիսի մարդիկ միշտ ախորժակով
են ուտում իրենց վերին աստիճանի պարզ սնունդը
և չեն գանգատուում մարսողութեան խանգարման,
ստամոքսի անգործութեան, գլխացաւի կամ նեար-
դային թուլութեան դէմ:

Ինչքան տարբեր է նստակեաց պաշտօնեաների,
գիտնականների և արուեստագէտների մարմնական
առողջութիւնը, շատ անգամ նոքա ջերմ գլուխ և
սառն ոտքեր ունին, վատ մարսողութիւն և աղիք-
ների անգործութիւն, Գոցանից շատ քշերն են, որ
նեարդային գրգռումներից չեն գանգատուում, Ան-
գործութեան, առողջութեան զգացմունքը հետզհե-
տե հազուադիւրս է գառնում այդ դասակարգի մէջ:

Մենք գիտենք, որ իւրաքանչիւր աշխատող
գործարան աւելի արիւն է պարունակում, նորա
երակներն աւելի են ընդարձակուում, և եթէ արդէն
սպացուցուած է, որ աշխատող մկանուկների միջով
աւելի արիւն է հոսում, քան հանգստացողի, կա-
տարիլապէս նոյնն է և ուղեղի վերաբերութեամբ,
Ուղեղը համեմատաբար աւելի արիւն է առնում և
այդ կատարում է ի հաշիւ միւս գործարանների,
Աւստի և թեւերն ու ոտները պակասարիւն են, երբ
ուղեղը արիւնով լի է, Իսկ որքան ծանրաբեռնուած
է մեր կեդրոնական գործարանը (ուղեղը) և որքան
պակասարիւն չըջանառութիւնը, նոյնքան անհան-
գիստ է մեր կացութիւնը:

Որքան շուտ սկսուին այդ անյաջող պայման-
ները մարդու մարմնի մէջ, որքան մատաղ հասակից,
նոյնքան վնասակար են այդ անհաւասարակչու-
թեան հետեանքները, Բայց եթէ մարմինը բոլորո-
վին կազմակերպուած է, կազմուածքն արդէն ամրա-
ցած՝ անդամները և երակային անոթների կաշին
այլևս այնքան առաձգական չեն, ինչպէս մատաղ,
քնքոյշ անհասինը, վնասն էլ աւելի թեթեւ է, Այդ
է պատճառը, որ կազմակերպուած մարդն աւելի
դիմացկուն է, քան պատանին կամ երեխան, Եթէ
այդպիսի անյաջող հանգամանքների մէջ է երեխան,
վնասն անխուսափելի և մշտական է, փոզի և ժա-
մանակի մեծ զոհաբերութեամբ միայն, այն էլ ոչ
միշտ յաջող կարելի է առողջութեան հաւասարա-
կչութիւնը վերականգնել, Պարզ ասեմ, մարդու
ամբողջ ապագան անդուրեկան կարող է գառնայ,
եթէ վերոյիշեալ անկանոնութիւնները մանկական
հասակից են սկսուած:

Միանգամայն սխալ է այն կարծիքը՝ թէ Գ տարե-
կան երեխան օրական 7—8 ժամ աշխատելով աւելի
բան է սովորում, քան 4—5 ժամ, Ես շատ անգամ
փորձել եմ, որ երեխան արձակուրդի միջոցին, լա-
քնելուց, առաւօտեան պարտիզում մի ժամ պտտե-
լուց, փոքր ինչ հանգստանալուց և ուտելուց յետոյ մի

* Պետերբուրգ 1867. նր. 55 շ: